

Արձանագրություն 4

2016 թ. ապրիլի 9-ին տեղի ունեցավ Գավառի պետական համալսարանի գիտխորհրդի նիստ: Նիստին մասնակցում էին գիտխորհրդի 31 անդամներից 29-ը:

Նախագահ՝ Ռ. Հակոբյան

Քարտուղար՝ Թ. Ասոյան

Օրակարգ՝

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտակերտի շրջանի դպրոցներին 250 քառ.մետր ապակի տրամադրելու հարցը:

/ զեկ.՝ ԳՊՀ ռեկտոր Ռ.Խ.Հակոբյան /

2. Ընթացիկ հարցեր:

Օրակարգի առաջին հարցի մասին զեկուցեց ԳՊՀ ռեկտոր Ռ.Հակոբյանը: Հանգամանորեն ներկայացնելով ապրիլյան պատերազմական իրադարձությունները՝ զեկուցողը խնդրեց մեկ րոպե լռությամբ հարգել հերոսաբար զոհվածների հիշատակը: Այնուհետև Ռ.Հակոբյանը նշեց, որ 4-օրյա պատերազմը մեկ անգամ ևս ցույց տվեց հայ ժողովրդի՝ հայրենիքի համար միասնաբար թեկուզև զիտակցված մահվան գնալու առանձնաշնորհը՝ մոռանալով անձնական, սոցիալական, տնտեսական խնդիրները: Պատերազմը մեծ վնաս հասցրեց սահմանամերձ բազմաթիվ բնակավայրերի. ավերվեցին դպրոցներ, մանկապարտեզներ, տներ, մարդիկ ստիպված լքեցին իրենց պապենական օջախները: Այս դեպքում ևս հայ ժողովուրդը միասնական կամք դրսևորեց՝ փորձելով նյութական միջոցներ հայթայթել մարդկանց օգնելու նպատակով: Այս գործում ներգրավվեցին պետական կառույցները, հասարակական կազմակերպությունները, անհատները, սփյուռքահայությունը: Ձեկուցողն ասաց, որ Գավառի պետական համալսարանը ևս պիտի հարի այդ համաժողովրդական շարժմանը: Համալսարանի ստորաբաժանումները, ուսանողական ինքնակառավարման մարմինները ակտիվ աշխատանքներ են տանում նյութական ու դրամական միջոցների հայթայթման ուղղությամբ: Այնուհետև Ռ.Հակոբյանն առաջարկեց ԼՂՀ Մարտակերտ քաղաքի դպրոցներին տրամադրել 250 քառ.մետր ապակի՝ լուսամուտները ապակեպատելու նպատակով:

Հարցի շուրջ ելույթ ունեցան դեկանները, դասախոսներ, համալսարանի աշխատակիցներ:

Հիմք ընդունելով Ռ.Հակոբյանի զեկուցումը և ելույթ ունեցողների առաջարկությունները՝

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. ԼՂՀ Մարտակերտ քաղաքի դպրոցներին լուսամուտներն ապակեպատելու նպատակով տրամադրել 250 քառ.մետր ապակի:

Նիստի նախագահ՝
Քարտուղար՝

Ռ.Խ.Հակոբյան
Թ.Ասոյան